Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝«Քեթիի միջն. դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ «Մայրենի»

Թեմա՝ «Սովորել սովորեցնելու ռազմավարությունը, մեթոդները, մոտեցումները 5-րդ դասարանում մայրենիի «Եղեգնուհին» հեքիաթի ամփոփման օրինակով»

Վերապատրաստող, մենթոր՝ Լաուրա Գրքիկյան

Ուսուցիչ՝ Փառանձեմ Պետրոսյան

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ1 «Սովորել սովորեցնելու ռազմավարությունը, մեթոդները, մոտեցումները 5-րդ դասարանում մայրենիի «Եղեգնուհին» հեքիաթի ամփոփման օրինակով»

1.1 Սովորողին սովորել սովորեցնելու ռազմավարության և հաջողության հասնելու մոտիվացիայի առանձնահատկություններն ու ուսուցչի կողմից դրանց ուղղված գործունեությունը հանրակրթական դպրոցում.....6

1.2 Սովորողի ինքնուրույնության ու նախաձեռնության խթանումը մայրենիի դասավանդման ընթացքում.....11

1.3 Փորձարարական մաս.....16

Եզրակացություններ և առաջարկություններ.....19

Օգտագործված գրականության ցանկ.....20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության առաջնային նպատակը սովորողների գիտելիքների և համապատասխան կարողությունների ու հմտությունների ձևավորումն ու զարգացումն է: Հենց այս նպատակների անցնցում իրականացմամբ էլ պակմանավորված են կրթական ոլորտի բարեփոխումները, որոնք իրենց հետ բերել են նոր ու ժամանակակից պահանջներ ու մարտահրավերներ: Ընդ որում՝ այդ բարեփոխումները նոր մոտեցումներ են պահանջում թչ միայն դասավանդողներից, այլև՝ ուսումնառուներից: Հենց այս համատեքստում է, որ ուսուցիչը կարող է բախվել մի շարք խնդիրների, ուստի ուսումնական առարկայի համար սահմանված կրթական չափորոշչային վերջնարդյունքին հասնելու համար անհրաժեշտ է, որ ուսուցիչն անպայման համապատասխանի նոր մարտահրավերներով պայմանավորված կրթական պահանջներին, լինի ստեղծագործ, նորարար, ունենա մարդասիրական մղումներ, մասնագիտական ու մարդկային բարձր որակներ, կարևորի աշակերտակենտրոն ուսուցումն ու սովորողի անմիջական մասնակցությունն իր իսկ ուսումնառության ճարտարապետության մեջ: Նոր ժամանակների ուսուցիչը պետք է հասկանա, որ իր անմիջական ներգործությունն ու ուղղորդումը առանցքային նշանակություն ունի դպրոցականի առաջադիմության բարձրացման, սովորել սովորելու կարողունակության ձևավորման գործում, բայց և միևնույն ժամանակ ուսուցիչը պետք է թույլ տա սովորողին դուրս գալ պասիվ դաշտից, դասին լինել ակտիվ, կառուցողական, այլ կերպ ասած՝ սովորողը պետք է հնարավորություն ունենա դառնալ դասապրոցեսի կենտրոնական սուբյեկտը՝ հնարավորություն ունենալով դասից վերցնել առավելագույնը:

Դասավանդման նմանօրինակ մոտեցումների արդյունքը կլինի այն, որ կունենանք ինքնուրույն մտածող ու գործող, կրթության և կյանքի այլ ոլորտներում նախաձեռնող, կյանքի իրողություններին ստեղծագործաբար մոտեցող սերունդ, կշռադատող, կարծիք ու դիրքորոշում ունեցող սորունդ: Հաշվի առնելով վերը նշած բարեփոխումները՝ հարկ ենք համարում նշել, որ այդ համատեքստում մեծապես կարևոր է նաև ուսուցչի կողմից դասի պլանավորման գործընթացն ու այդ ընթացքում մանկավարժամեթոդական ժամանակակից հնարների, դասի զանազան տիպերի ու ձևերի կիրառումը դպրոցում, որոնք էլ կարող են հանդիսանալ նոր որակի կրթություն նախագծելու և կառուցելու հիմնասյուները:

Արդի կրթական համակարգում մեծ ամենատարածված խնդիրներից մեկը սովորողին սովորել սովորեցնելու, նախագծողի և հետազոտողի դերում հանդես գալու հնարավորություն տալն է, հաջողության հասնելու մոտիվացիային դրդելը: Մոտիվացված սովորող ունենալու պահանջը պայմանավորված է կրթական համակարգի կատարելագործմամբ, մարդկանց կյանքին նախապատրաստելու անհրաժեշտությամ: Փորձը ցույց է տալիս, որ անհաջողակ, դժվարություններից խուսափող մարդիկ չեն գտնում կամ քիչ են գտնում ինքնուրույն գործունեության այնպիսի ոլորտ, որտեղ կարելի է իրացնել իրենց ներուժը: Վերջին շրջանում մեծ նշանակություն է տրվում հաջողության հասնելու մոտիվացիայի ուսումնասիրությանը, քանի որ հանրակրթական պետական չափորոշիչը պահանջներ է ներկայացնում սովորողների անհատական զարգացման վերաբերյալ, ուստի սովորողներին մոտիվացնելու, դեպի ուսումնական գործընթաց բերելու և ուսման հանդեպ հետաքրքրությունը մեծացնելու հիմնախնդիրները մեզ՝ ուսուցիչներիս համար օրախնդիր են դարձել:

Այսպիսով, կարծում ենք, որ սովորողների շրջանում շատ կարևոր է ուսումնառության գործընթացի նկատմամբ գիտակից ու կառուցողական մոտեցում ձևավորել հենց դպրոցում: Սովորողի համար իր ուսումնառության արդյունքը պետք է լինի առարկայական, սովորողը պետք է խրախուսվի, գործնականում կիրառի տեսական գիտելիքը, փոխգործակցի դասընկերների հետ: Իսկ այս ամենին հասնելու համար հարկավոր է, որ ուսումնական առարկան վերջինիս համար լինի հետաքրքիր, նա ոչ միայն յուրացնի տեսական նյութը, այլև կարողանա սովորածը կիրառել զանազան փորձարարական, հետազոտական ու նախագծային դասերի ժամանակ, ինչն էլ վերջինիս մոտ կձևավորի ինքնուրույնություն, նախաձեռնություն, սովորելու նկատմամբ մեծ մոտիվացիա:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց՝ ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, որպես նախաձեռնող հանդես գալու, ստեղծագործական մտածելու ունակություններն ու սովորել սովորելու կարողունակությունը՝ ամեն կերպ խրախուսելով սովորողի

ինքնուրույն գործելու ցանկացած դրսևորում, որն էլ իր հերթին կարող է նպաստել սովորողի մոտ հաջողության հասնելու մոտիվացիայի և առաջադիմության բարձրացմանը:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է՝

- Ուսումնասիրել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցումները սովորողների համագործակցային, ստեղծագործական և այլ կարողությունների ձեռքբերման ու զարգացման գործում
- Ցույց տալ սովորողներին ոգևորելու, խրախուսելու, ինքնուրույն գործունեություն ծավալելու դերը վերջիններիս առաջադիմության և սովորելու մոտիվացիայի բարձրացման համատեքստում:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է շեշտադրել մայրենիի դասավանդման ընթացքում ժամանակակից կրթական մեթոդների և աշակերտակենտրոն ուսուցման դրական ազդեցությունը սովորողների սովորել սովորելու կարողունակության ձևավորման ու զարգացման գործում:

ԳԼՈՒԽ 1 «ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԹՈԴՆԵՐԸ, ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՄԱՅՐԵՆԻԻ «ԵՂԵԳՆՈՒՀԻՆ» ՀԵՔԻԱԹԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ»

1.1 Սովորողին սովորել սովորեցնելու ռազմավարության և հաջողության հասնելու մոտիվացիայի առանձնահատկություններն ու ուսուցչի կողմից դրանց ուղղված գործունեությունը հանրակրթական դպրոցում

Տեխնոլոգիական աշխարհում դպրոցը կանգնած է մեծագույն մարտահրավերների առջև, որոնցից ամենակարևորը, կարծում ենք, սովորողների հետաքրքրությունների գնահատումն ու ապահովումն է, ինչպեսն նաև վերջինիս մոտ սովորել սովորելու կարողունակության ձևավորումը: Սա արդիական է այն առումով, քանի որ հաճախակի է դարձել սովորողների անտարբերությունը ուսումնական գործընթացի նկատմամբ, ինչը մեծապես ազդում է կրթության որակի վրա: Իհարկե, ուսման նկատմամբ հնարավոր անտարբերությունը կարելի է բացատրել տարիքայի առանձնահատկություններով, սովորողների հետաքրքրությունների ու նախասիրությունների բավարարման բացակայությամբ: Հենց այստեղ է առաջանում սովորողին մոտիվացնելու, դեպի դպրոց նրա հետաքրքրություններն ուղղելու պատասխանատու գործընթացը, որը հիմնականում դրված է ուսուցչի վրա:

Արդի կրթական պահանջների բավարարման համար ուսուցչին օգնության են գալիս դասավանդման ժամանակակից մոտեցումները, մեթոդներն ու գործիքները, որոնք թույլ են տալիս վերենայել սովորողի դերն ու մասնակցությունը դասավանդման գործընթացում՝ դարձնելով նրան հետազոտող, նախագծող, սովորեցնող: Իսկ ինչպե՞ս անել, որ սովորողն ինքնակամ հասկանա, որ դասից կարող է վերցնել մի շարք կարևոր կարողունակություններ, գիտելիքների այնպիսի պաշար, որոնք հետագայում հանդիսանալու են իր բարեկեցիկ ապագայի հիմնասյուները: Թերևս այս հարցն է, որ պետք է իր առջև դնի յուրաքանչյուր ուսուցիչ: Անչափ կարևոր է, որ ուսուցիչն ինքը լինի նորարար, գիտակցի իր դերակատարման կարևորությունը, իր մասնագիտական պարտականությունները կատարի ամենայն պատասխանատվությամբ: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ, համագործակցել ծնողների հետ

երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում, համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով[1]»:

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական անկյունաքարերից են, ուստի նորագույն տեխնոլոգիաներով հեղեղված այս ժամանակաշրջանում մանկավարժի գործառույթներից ամենակարևորը թերևս սովորողին դեպի կրթություն շահագրգռելը, մոտիվացնելը, խոսուն ու գործնական օրինակներով կրթության դերն ու նշանակությունը կարևորելը, վերջինիս մոտ ինքնուրույնության, նախաձեռնողական ու ստեղծագործական ունակությունների ձևավորելն է: Հենց այդ նպատակներից է բխում ուսուցչի կողմից նորագույն մեթոդներին, զանազան տեխնոլոգիական նորարարություններին դիմելն ու տարրբեր տիպի ու նշանակության դասեր իրականացնելը: Բուն գիտելիքի հաղորդմանը զուգահեռ՝ անչափ կարևոր է այդ գիտելիքի իրացումը գործնականում, ուստի ամեն կերպ պետք է նպաստել սովորողի տեսական գիտելիքների գործնական կիրառման հնարավորությունների ստեղումը: Կարող ենք ասել, որ միայն տեսական գիտելիքը որևէ հիմնաքարային ազդեցություն չի կարող ունենալ սովորողի իմացական կարողություններն ամրապնտելու առումով, քանի որ գործնական պարապունքների բացակայության պարագայում, սովորողի մոտ ուսուցանվող նյութը կունենա մեխանիկական բնույթ:

Կրթական համակարգում իրականացվող բարեփոխումներից մեկն էլ կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթության ներդրումն է, որն ուղղված է սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերի ուսուցմանը: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության

[1]https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 5-7:

միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից[2]: Սովորողների կրողունակությունների ձևավորմանն ուղղված դասերը մեծապես կարող են օգնել, որ սովորողը մոտիվացվի, հետաքրքրություններ գտնի դասի մեջ, ինքնուրույն գործի և ցանկանա համագործակցել թե' ուսուցչի, թե' դասընկերների հետ:

Դասավանդման նման մոդելն իր բովանդակությամբ, մեթոդներով ու կիրառման ձևերով էապես տարբերվում է դասավանդման ավանդական մոտեցումներից և լայն հնարավորություններ է ստեղծում սովորողների համար: Ավանդական դասի ընթացքում սովորողները պասիվ են, հիմնականում լսում են, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի ընթացքում հնարավորություն ունեն հարցեր տալու, կարծիք հայտնելու, ավանդական դասի ընթացքում գործում է ուսուցիչ-աշակերտ կապը, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին՝ նաև աշակերտ-աշակերտ կապը, ավանդական դասին ուսուցիչը, ըստ թեմատիկ պլանի, ծրագիրն անցնում է, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի ընթացքում մյուս թեմային չի անցնում, քանի դեռ աշակերտները չեն յուրացրել տվյալ թեմայի առանցքային գաղափարները[3]:

Անչափ կարևոր հանգամանք է, որ դասին սովորողը լինի հնարավորինս ինքնուրույն, իսկ դրա համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն: Պակաս կարևոր չէ սովորողի ստեղծագործական մտածողության զարգացումն ու առհասարակ վերջինիս ստեղծագործականությունն ընդհանրապես: Ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից:

Անձի համակողմանի զարգացումն իրենից ենթադրում է, որ ցանկացած դժվարություն մարդ կարող է կառավարել՝ հենվելով իր իմացական ու գործառական

[2] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Նոր ոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Նոր ոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

[3] Մասնակցայինմշակույթևկոմպետենցիաներիվրահիմնվածուսուցում, ռեսուրսգրքույկ, Երևան, 2020:

ներուժի վրա: Հենց սրանով է պայմանավորված կրթության արդիականացման գործընթացը, որի հիմնական նպատակն է ունենալ ինքնուրույն, նախաձեռնող ու նորարար սովորող: Այս ամենը մեծ չափով կախված է նաև նաև դասավանդող ուսուցչի մասնագիտական որակներից: Ուսուցիչը պետք է անպայման իրազեկ լինի օրենքով սահմանված իր պարտավորություններին և անվերապահորեն կատարի դրանք, որոնցից այս համատեքստում կառանձնացնենք հետևյալը՝ «Ուսուցիչը պետք է սովորողների մեջ զարգացնի ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ»[4]: Անշուշտ, կարևոր է մեծ ուշադրություն դարձնել նաև սովորողների մոտ մի շարք առանցքային կարողունակությունների ձևավորմանը, որոնցից է նաև սովորել սովորելու կարողունակությունը, ինչը, նախատեսում է, որ սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն[5]:

Այսպիսով, առաջնահերթություն համարելով սովորողի ինքնուրույնության ու նախաձեռնության զարգացումը, հետազոտելով ու նախագծելով սովորելու և սովորեցնելու կարողունակությունը՝ կարծում ենք, որ սովորողները պետք է դառնան ուսումնական գործընթացի գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ, նորորանրությամբ, ինչը ժամանակի ընթացքում հնարավորություն կտա լուծել մեր առջև դրած խնդիրը, այն է՝ սովորողի մոտ զարգացնել ինքնուրույն ու նախաձեռնություն և բարձրացնել վերջիններիս մոտիվացիան:

---

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 ՀՀ հանրակրթության մասին օրենք: Հոդված 27, կետ 10:

[5] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Նոր ոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Նոր ոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

Կարող ենք արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Նա պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ:Կրթության որակի բարձրացման, սովորողի մեջ առաջնային կարողությունների ձևավորման համար կարևոր է նաև կրթության բովանդակությունը: Կրթության բովանդակությունը նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի ամբողջություն է, որի մեջ ամփոփված է ի՞նչ ենք սովորեցնում հարցը: Այդ հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող աշխարհում, քանի որ ժամանակի պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա սովորողին[6]:

Դասին կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաները, ՏՀՏ գործիքները ունակ են սովորողներին օժտել հետևյալ հմտություններով՝

- Ինքնուրույնություն, կոլեկտիվ աշխատանքում սեփական ներուժը կիրառելու կարողություն,
- մեդիահմտությունների զարգացում, հետազոտելու, համացանցում որոնելու հմտություններ, թվային միջոցները գործածելու հմտություններ, տեխնոլոգիական հմտությունների զարգացում;
- անկաշկանդ ինքնարտահայտվելու կարողություն, ինքնահսկում, հաղորդակցական կարողությունների զարգացում:

Միջառարկայական կապերի կիրառումը դասապրոցեսի ընթացքում ևս մի եղանակ է սովորողին ոգևորելու և նրա հետաքրքրությունը մեծացնելու համար: Նմանօրինակ դասերը կարող են բարձրացել ուսուցման գիտականությունը, մատչելիությունը, տալ սովորողին գործնական կարողություններ՝ այդպիսով ապահովելով կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքների բավարարումը: Սովորողը պետք է լինի ճկուն, կարողանա ընտրել, համեմատել, պարզաբանել, հիմնավորել, փաստարկել, հետազոտել ու կշռադատել: Այս ամենն իմանալն ու կարողանալը կնշանակի՝ ունենալ

[6] https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013, էջ 13:

գիտակցական բարձր մակարդակ, ճանաչողական կարողություններ, ինչն էլ այսօր կարևոր է արդի աշխարհում:

1.2 Սովորողի ինքնուրույնության ու նախաձեռնության խթանումը մայրենիի դասավանդման ընթացքում

Միջազգային փորձը վկայում է, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող կրթության բովանդակություն: Ուստի կարևոր ենք համարում ուսումնական հաստատության ուսուցչի դերը կրթության որակի բարձրացման գործում, դրան ուղղված վերջինիս կողմից իրականացրած կառուցողական քայլերը և, որ ամենակարևորն է, փոխհամագործակցությունը սովորողի հետ՝ որպես կրթության առաջնային շահակից: Այս համատեքստում կարևոր ենք համարում ուսուցչի կողմից սովորողի ցանկացած նորորարական քայլերի խրախուսումը, վերջինիս ինքնուրույն գործելու, նախաձեռնողի դերում հանդես գալու պահանջմունքի բավարարումը:

Սովորողների ստեղծագործական մտածողության զարգացումը, նրանց մոտ արժեքների և դիրքորոշումների ձևավորումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է: Պակաս կարևոր չեն ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը, որոնց համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում:

Անհերքելի փաստ է, որ լեզուների ուսումնասիրությունն ընդլայնում է սովորողի աշխարհայացքը, նպաստում հաղորդակցման և հանրամշակույթային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանը: Հանրակրթական դպրոցում «մայրենի» ուսումնական առարկայի դասավանդումը ինչպես աջակցում է սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը, այնպես էլ վերջիններիս մոտ ձևավորում նոր հմտություններ ու կարողություններ՝ հիմք հանդիսանալով մյուս ուսումնական

առարկաների ուսումնասիրության համար: Ակնհայտ է, որ հայոց լեզվի առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքին հասնելու գործընթացը պահանջում է երկարատև ու համակարգված աշխատանք, որտեղ կարևոր են և' սովորողի նախաձեռնողականությունն ու մոտիվացիան, և' ուսուցչի մասնագիտական որակները, ուստի և մայրենիի դասավանդման շրջանակներում հույժ կարևոր է թե' գրավոր, թե' բանավոր խոսքը, որոնք փոխլրացնում են միմյանց: Վերը նշած համագործակցության կայացման և ցանկալի վերջնարդյունքի հաստատմանը մեծապես կարող է օգնել կրթական համակարգի արդիականացումը:

Ավանդական մոդելով պլանավորված դասն այլևս չի կարողանում բավարարել նոր մտածողություն ու կրթական կարիքներ ունեցող սովորողների կրթական պահանջմունքները, ուստի, ինչպես արդեն նշել էինք, հարկավոր է մեծապես վերանայել դասի պլանավորման գործընթացը: Մեր մանկավարժական գործունեության փորձին հղում անելով՝ կարող ենք փաստել, որ ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ներդրումը , ՏՀՏ բաղադրիչի կիրառումը դասի ժամանակ ավելի արդյունավետ ու արգասաբեր կարող են դարձնել բուն ուսուցման գործընթացը՝ նպաստելով, որ սովորողն ինքնակամ պրպտի, գտնի համապատասխան ուսումնական նյութը, ինքնուրույն հետազոտի, եզրահանգումներ կատարի, խմբային զանազան մեթոդներով դասընկերների հետ լուծի իր առջև դրված խնդիրները: Ստացվում է, որ նորարարություններով պայմանավորված կրթական բարենպաստ միջավայրի ապահովումը սովորողի համար կարող էստեղծել անհրաժեշտ ազդակներ, որպեսզի դասապրոցեսը դիտարկվի ոչ թե հարկադրանք, այլ սեփական հաետաքրքրությունները, նախասիրությունները, երազանքները, գաղափարներն ու ներուժը համակարգելու ու տեսանելի արդյունք ստանալու հարթակ:

Լեզվական և հաղորդակցական կարողություններն անկյունաքարային են ցանկացած գործունեություն ծավալելու ընթացքում: Այս կարողության բնականոն զարգացումով է պայմանավորված նաև հանրակրթական հաստատությունում սովորողի զարգացումն ու մտավոր առաջընթացը, ուստի և ցանկացած ուսումնական գործընթացի անբաժանելի ու փոխկապակցված բաղադրիչը հենց բնականոն զարգացող հաղորդակցումն է: Շատ կարևոր է մայրենիի դասաժամի ընթացքում պայմաններ ստեղծել, որ դասի ընթացքում սովորողի դերը լինի ավելի ակտիվ, նա ուղղակի կերպով լինի դասի ընթացքի

կենտրոնում, չլինի պասիվ, այլ հնարավորինս շատ խոսի, մեկնաբանի, կարծիք հայտնի: Ակտիվ խոսքը հնարավորություն է տալիս, որ սովորողն ավելի արագ զարգացնի կապակցված խոսքը, հոկի, կոկի, գեղեցկացնի այն: Անշուշտ, կապակցված խոսքին դրական հատկանիշներ տալու համար հարկ է, որ դրան նախորդած մյուս փուլերը՝ լեզվական հիմնական միավորների ուսուցումը, բառային ֆոնդի հարստացումը, քերականական կառուցվածքի ձևավորումը նույնպես իրականացված լինեն արդյունավետ, քանի որ հենց այս հենքի վրա է, որ սովորողն ունենում է լիարժեք կապակցված խոսք:

Միջին դպրոցում սովորողների ստացած գիտելիքները համակարգված կերպով ընդլայնում են հայոց լեզվի տարբեր բաժիններից տարրական դասարաններում սովորողների ձեռք բերած պատկերացումները: Ուստի ծավալային ու բովանդակության խորքայնության առումով դրանք գերազանցում են ուսուցման նախորդ օղակում ստացած գիտելիքներին: Այս ամենով պայմանավորված՝ կարևոր ենք համարում, որ յուրաքանչյուր ուսուցանվող թեմա լինի համակողմանի ու խորը ուսումնասիրված, չկրի մեխանիկական վերարտադրման բնույթ, կապակցվի գործնական հմտությունների հետ: Դասապրոցեսի ընթացքում սովորողի անձը պետք է ամեն կերպ կարևորվի, նա պետք է հասկանա, որ ինքը դասի ընթացքի կարևոր սուբյեկտն է և պետք է հնարավորություն ունենա համագործակցել դասընկերների հետ: Անձնակենտրոն կամ սովորողակենտրոն ուսումնառություն. սովորողն ինքնուրույն է, աշխատում է հիմնականում դասարանում՝ ուսուցչի և ընկերների հետ համագործակցելով: Ուսումնառության գործընթացում շեշտադրվում են սովորողի անհատականությունը, անձնային ներդաշնակ զարգացումը, սովորելու ոճը, հետաքրքրությունների և կարիքների շրջանակը: Սովորողը նախագծում և իրականացնում է տարաբնույթ հետազոտություններ[7]:

Նոր ժամանակների մարտահրավերները մեծապես ազդել են նաև մատաղ սերնդի մտածողության, արժեհամակարգի ու հետաքրքրությունների շրջանակի վրա: Գաղտնիք չէ, որ նրանք դարձել են առավել համարձակ, արագ կողմնորոշվող ու հետաքրքրասեր: Ուստի այս հանգամանքը ևս հարկավոր է դիտարկել և կարևորել: Սովորողին այլևս չի բավարարում պասիվ լսողի իր դերը դասի ընթացքում, նա ուսուցչից ակնկալում է ակտիվ

[7]https://escs.am/files/files/2020-07-17/8e86258106381f2fda04290ffa268a94.pdf «Մայրենիի ծրագիր հանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար»:

ու դինամիկ դաս, որտեղ ինքն անկաշկանդ է և առկա է բարոյահոգեբանական կայուն մթնոլորտ:

Անչափ կարևոր է նաև մայրենիի դասավանդման գործնական նշանակությունը: Այս համատեքստում սովորողը պետք է կարողանա տեսական գիտելիքը կիրառել գործնականում, կազմի նախադասություններ, կարողանա կատարել բառերի ձևաբանական, բառակազմական և շարահյուսական վերլուծություններ, ունենա երկխոսելու և մենախոսելու հմտություններ, կարողանա կատարել եզրահանգումներ, վերլուծություններ, կազմի ստեղծագործական, վերլուծական, բնութագրական տեքստեր: Այս նպատակներին հասնելու համար ուսուցիչը պետք է կարողանա մտածված ընտրի և ուսուցանի յուրաքանչյուր դասի բովանդակությունը, ճիշտ օգտագործի դասվանդման մեթոդներն ու օգտագործվող միջոցները: Դասի ժամանակ անհրաժեշտ է կիրառել ուսուցման տարբեր ձևեր և մեթոդներ՝ հանդես բերելով նոր մոտեցումներ,ավանդականի հետ նոր մեթոդների համակցում: 1-6-րդ դասարաններում, քանի որ հայոց լեզվի և գրականության միասնացած ուսուցում է իրականացվում, սահմանվել են հետևյալ հիմնական և ենթահասկացությունները՝

- Հաղորդակցում՝ բանավոր հաղորդակցում, գրավոր հաղորդակցում, ոչ խոսքային հաղորդակցում.
- Ընթերցանություն (գրականություն)՝ տեքստի հասկացում, տեքստի գեղագիտություն, տեքստի տրամաբանություն.
- Լեզվական համակարգ՝ հայերենի հնչյունական, բառակազմական, քերականական համակարգեր.
- Ստեղծարարություն՝ կապակցված խոսք, տեքստ, հետազոտում/նախագիծ: Ինքնություն՝ վերաբերմունք և արժևորում[8]:

Այս ամենը հաշվի առնելով՝ ուսուցիչը պետք է կարողանա պլանավորել բազմաֆունկցիոնալ դաս, որպեսզի կարողանա սովորողին տալ և' լեզվական, և' հաղորդակցական գիտելիքներ, ինչպես նաև զարգացնի ընթերցելու հմտություններն ու սովորածը գործնականում կիրառելու կարողությունը: Արդյունքը կլինի այն, որ բոլոր սովորողները կսկսեն աշխատել դասի ժամանակ, կունենան որոշակի զբաղվածություն,

[8]https://escs.am/files/files/2020-07-17/8e86258106381f2fda04290ffa268a94.pdf «Մայրենիի ծրագիր հանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար»:

որևէ մեկը պասիվ դաշտում չի մնա: Աշակերտակենտրոն մոտեցումները քերականության ուսուցման ժամանակ շատ կարևոր են: Այս դասընթացն է, որ դրվում է սովորողների լեզվամտածողության զարգացման հենքում, նրանց գրագետ ու մաքուր խոսքային կարողության զարգացման ակունքում: Ուստի հարկավոր է մոտիվացնել ու խրախուսել սովորողներին, տալ նրանց պարտականություններ և խնդիրներ ու չմիջամտել՝ թույլ տալով, որ սովորողն ինքուրույն փնտրի ու գտնի այն, ինչն իրեն հարկավոր է: Իհարկե, նորարարական մոտեցումներն ուսումնադաստիարակչական գործընթացում անչափ կարևոր են, սակայն նշենք նաև, որ որևէ կերպ չենք բացառում ու ստորադասում ավանդական մոտեցումների օգտագործումը՝ հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը, որոնք այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար:

Այսպիսով, աներկբա է, որ ժամանակակից կրթության առանցքային հիմնախնդիրներից է ստեղծագործ, անկախ գործող, նախաձեռնող ու նախագծող, սովորող ու սովորեցնող սերնդի ձևավորումը: Հենց այս կարողությունների ձևավորմամբ է պայմանավորված մարդկության առաջընթացը, որն այսօր աննախադեպ կերպով շոշափելի է դարձել:

1.3 Փորձարարական մաս

Ինչպես նշեցինք, դասավանդման նորագույն տեխնոլոգիաներն ու մոդեները, մեթոդական համագործակցային, ինտերակտիվ հնարների կիրառումը ուսուցչին թույլ է տալիս կառավարելի դարձնել դասարանն ու ապահովել սովորողների համաչափ մասնակցությունը դասին: Նմանօրինակ հնարների ու տեխնոլոգիաների կիրառումը սովորողի առաջ բացում է ստեղծագործ մոտեցումներ ցուցաբերելու, ինքնուրույն գերծելու, կարծիք ու տեսակետ հայտնելու լայն հնարավորություններ: Այս կերպ դասի փուլերը հստակ տարանջատվում են, լրացնում միմյանց, ինչն իր հերթին նպաստում է, որ դասարանը չկորցնի ակտիվությունը: Եթե դասը հետաքրքիր է, ակտիվ , ապա սովորողը հաճույքով է մասնակցում դասին: Բերենք ցուցադրական դասի օրինակ, որի պլանավորման հենքում դրվել են դասավանդման ժամանակակից մոտեցումները և փորձենք դրանով իսկ հիմնավորել հետազոտության տեսական մասում կատարած մեր պնդումները:

Դասարանը՝ 5-րդ

Դասի թեման՝ Ղ. Աղայան, «Եղեգնուհին»

Դասի տիպը՝ Ամփոփման, գիտելիքների կատարելագործման դաս

Դասի կահավորումը՝ Ցուցապաստառ, տեսասահիկ, քարտեր

Դասին կիրառվող մեթոդները՝ **Համաշխարհային սրճարան, խմբային քննարկումներ, խճանկար, երկսյուն աղյուսակ**

Դասի նպատակը՝

ա.Գիտելիքներ

Աշակերտը պետք է իմանա՝

- Ղ. Աղայանի կենսագրության համառոտագիրը
- Հեքիաթի ժանրային առանձնահատկությունները

- Տեքստում առակա անծանոթ բառերի բացատրությունը

բ.Կարողություններ և հմտություններ

Աշակերտը պետք է կարողանա՝

- Սահուն և հասկանալով ընթերցել բնագիրը, մեկնաբանել ընթերցածի բովանդակությունը, վերարտադրել բնագիրը:
- Խմբային քննարկումների ժամանակ լինել ակտիվ՝ զարգացնելով սոցիալական հմտություններն ու լեզվամտածողությունը:

գ. Արժեքային համակարգ

- Վերաբերմունք արտահայտի չարի ու բարու նկատմամբ, գիտակցի ստախոսության ու բացասական վարքի հնարավոր հետևանքները
- Սովորի ճիշտ գնահատել բարության ու ճշմարտախոսության դերը մարդու կյանքում:

Դասի վերջնարդյունքները

- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
- Լեզվական գրագիտություն կարողունակություն,
- Սովորել սովորեու կարողունակության ձևավորում:

Դասի ընթացքը

Խմբային քննարկումների օգնությամբ սովորողները հաջորդաբար կներկայացնեն հեքիաթի բովանդակությունն ու գաղափարը, ապա բանավոր կհատկանշավորեն հերոսներին՝ օգտվելով երկյուն աղյուսակից:

Եղեգնուհի	Խափշիկ

Ուսուցիչը կհանձնարարի ուսումնական նյութը բաժանել մասերի և վերնագրել համապատասխան հատվածը: Հաջորդիվ նախօրոք կազմած 3 խմբերին կհանձնարարվի հատվածից դուրս գրել գոյականներն ու ածականները, դրանք ենթարկել ձևաբանական վերլուծության և բանավոր կազմել նախադասություններ: Խմբերը կաշխատեն ինքնուրույն,

ուսուցիչը չի միջամտի աշխատանքին: Հաջորդիվ ամեն խմբի կտվի ժամանակ իր աշխատանքը ներկայացնելու համար:

Թեմայի շուրջ գիտելիքներն ավելի առարկայական դարձնելու համար ուսուցիչը կկիրառի «Համաշխարհային սրճարան» մեթոդը, որը, գիտելիքի փոխանակման համակարգված խոսակցական գործընթաց է: Մեթոդի կիրառման ժամանակ սեղանները տեղադրվում են սրճարանների սեղանների նման՝ միմյանցից որոշակի հեռավորության վրա, ընթացքում, ֆորմալ գործընթացներն ապահովելու համար, ուսուցիչը հնարավորություն կտա խոսելու բոլորին: Չնայած ձևակերպված հարցերը կարող են հստակեցվել մեթոդի կիրառման հենց սկզբում, վերջնարդյունքները կամ եզրահանգումները չեն լուծվում նախապես: Խմբային քննարկումների միջոցով ընդհանուր եզրահանգումներ կատարելը կօգնի, որ սովորողների մասնակցությունը լինի համաչափ, և սովորողները հնարավորություն կունենան միմյանցից սովորել, քաջալերել մեկմեկու:

Հաջորդիվ գիտելիքն ամրապնդելու համար սովորողները բարձրաձայն կկարդան բնագիրը, կգտնեն հանձնարարված բառերի հոմանիշներն ու հականիշները:

Ապա ուսուցչի հրահանգով կպատասխանեն հետևյալ հարցերին՝

- **Ի՞նչ իմացանք, ի՞նչ պարզեցինք**

Դասի ամփոփիչ հատվածում ուսուցչի ակնկալիքը հետադարձ կապ ստեղծելն է: Այդ նպատակով կհանձնարարի ուսումնական նյութից դուրս գրել դարձվածքներն ու կիրառել նախադասության մեջ:

Դասի ավարտին սովորողները կլրացնեն ինքնագնահատման ռուբրիկ

Դասը հետաքրքի՞ր էր քեզ համար:	ԱՅՈ	ՈՉ
Խմբային աշխատանքին ակտիվ մասնակցություն ունեցա՞ր:	ԱՅՈ	ՈՉ
Դասից ի՞նչ նոր բան իմացար		
Կա՞ր մի բան, որ պակասում էր քեզ դասին:		

Գնահատում

Տնային հանձնարարություն՝ /Գրել ստեղծագործական շարադրություն՝ «Եղեգնուհու զարմանալի պատմությունը» թեմայով/:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն աշխատանքի վերլուծության արդյունքում կատարեցինք մի քանի արձանագրումներ, որոնք կամբողջացնենք, ընդհանրական տեսքի կբերենք ստորև: Աշխատության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում, այնուամենայնիվ մի բան հստակ է, եթե մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցիչը հիմնական գիտելիքների հաղորդմանը զուգահեռ նպատակ է դնում զարգացնել սովորողի պատկերավոր մտածողությունը, ինքնուրույն գործելու ու նախաձեռնողական քայլեր կատարելու կարողությունը, սովորել սովորելու կարողությունը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ որոշակի կոնկրետ գոտում աշակերտն ունի իր հետաքրքրությունները, առանձնահատկությունները: Այս համատեքստում կրկին կցանկանանք շեշտադրել աշակերտակենտրոն ուսուցման կարևորությունը:

Սովորողի հետ հաշվի նստել, լսել նրա կարծիքը, խրախուսել վերջինիս, ստուգման ընթացքում շեշտադրել ոչ թե սխալ, այլ ճիշտ բաղադրիչը, կարծում ենք, որ նման մոտեցումը սովորողին ու դասարանը կդարձնեն հեշտ կառավարելի, և ուսուցիչն անպատճառ կհասնի հաջողության: Իսկ ահա ստեղծագործական ունակությունների զարգացումն անմիջական գործընթաց է, որը զուգահեռվում է հիմնական գիտելիքների հաղորդմանը, ուստի ուսուցիչը պետք է շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ, որպեսզի ամեն կերպ խրախուսվի անհատի գիտակցումը, ինքնուրույնության կարևորությունը սովորողի մոտ:

Անշուշտ, այս ամենից հետո կարելի է վստահաբար նշել, որ գործ կունենանք նախաձեռնող, մտածող, ստեղծագործող և ինքնուրույն դատող անհատի հետ: Կարևորագույն բաղադրիչ է նաև բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը, ինչը թույլ կտա, որ սովորողը հնարավորինս արագ ինտեգրվի հասարակություն ու նախաձեռնողի դերում լինի, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել ուսումնական հաստատությունից դուրս: Այս հարցում պակաս կարևոր չէ սոցիալական միջավայրի՝ այս պարագայում դասարանի ընդհանրական դերը:

Կարծում ենք, որ սույն հետազոտության մեջ կատարած արձանագրումները մեծապես կօգնեն մեզ հետագա աշխատանքի ընթացքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27:
2. ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Նոր ոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Նոր ոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
3. Մասնակցայինմշակույթևկոմպետենցիաներիվրահիմնվածուսուցում, ռեսուրսգրքույկ, Երևան, 2020:
4. https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013:
5. https://escs.am/files/files/2020-07-17/8e86258106381f2fda04290ffa268a94.pdf «Մայրենիի ծրագիր հանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար»: